Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020 թվականի մայիսի 23-ին և հունիսի 1-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման և լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման մասին» նամակ-համաձայնագրի՝ հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF FINANCE OF
THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER

МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
0010, Ереван, ул. Мелик-Адамяна 1
1 Melik-Adamyan str., Yerevan, 0010
www.minfin.am
E-mail: secretariat@minfin.am
Phone: (+374 11) 800 002

թիվ 01/5-2/7665-2020
23 մայիսի, 2020

Տիկին Յուլիա Ուստյուգովային
Հայաստանի Հանրապետությունում մշտական ներկայացուցիչ
Արժույթի միջազգային հիմնադրամ

Թեմա՝ Պահուստային ծրագրի միջոցների օգտագործում և լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավում

Հարգելի տիկին Ուստյուգովա,

Հղում կատարելով մեր նախկին կարգավորումներին՝ պատիվ ունեմ՝ դիմելու Արժույթի միջազգային հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետությանը Պահուստային ծրագրի ներքո 231.656 միլիոն ՀՓԻ-ին համարժեք բյուջետային աջակցության վարկ տրամադրելու նպատակով՝ հետևյալ դրույթներով և պայմաններով.

<u>մասհանում.</u> փոխառու միջոցները, ներառյալ՝ Պահուստային ծրագրի շրջանակում հասանելի գնման իրավունքները (ընդհանուր 231.656 մլն ՀՓԻ-ին համարժեք գումար), մասհանվելու են 2020 թվականի ընթացքում երկու մասնաբաժնով. առաջին մասհանումը համարժեք է լինելու 205.942 մլն ՀՓԻ-ին, իսկ երկրորդ մասնաբաժինը համարժեք է լինելու 25.714 մլն ՀՓԻ-ին և մասհանվելու է Պահուստային ծրագրի երրորդ վերանայման եզրափակումից հետո:

<u>մարում.</u> Պահուստային ծրագրի ներքո փոխառու միջոցների մարումը ենթակա է մասհանման 3.25-5 տարվա ընթացում, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր մասհանում մարվելու է 8 հավասար եռամսյակային մարումներով՝ սկսած յուրաքանչյուր մասհանման 3.25 տարուց հետո:

<u>վարկավորման տոկոսադրույք.</u> վարկավորման տոկոսադրույքը բաղկացած է՝ (1) շուկայական ՀՓԻ տոկոսադրույքից, որն ունի նվազագույն 0.05% շեմ, և մարժայից (ներկայում 1%), միասին հայտնի որպես բազիսային տոկոսադրույք, և (2) հավելավճարից, որը կախված է վարկի

մնացորդի գումարից և ժամանակից: 2% հավելավճար է վճարվում վարկի մնացորդի՝ քվոտայի 187.5%-ը գերազանցող գումարի համար: Եթե վարկը մնում է քվոտայի 187.5%-ից բարձր երեք տարի անց, հավելավճարը բարձրանում է մինչև 3%:

<u>պարտավորության վճար.</u> Պահուստային ծրագրի ներքո ստանձնած միջոցները ենթակա են պարտավորության վճարի՝ գանձված յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում տրամադրվելիք մասհանումների նկատմամբ (0.15%՝ մինչև քվոտայի 115%-ը ստանձնած միջոցների համար դեպքում, 0.3%՝ քվոտայի 115%-ից բարձր և մինչև 575%-ը ստանձնած միջոցների համար և 0.6%՝ քվոտայի 575%-ը գերազանցող գումարների համար): Վճարները համամասնորեն վերադարձվում են, եթե գումարները համապատասխան ժամանակահատվածի ընթացքում մասհանվում են:

<u>ծառայության վճար.</u> 0.5% ծառայության վճար կիրառվում է մասհանված յուրաքանչյուր գումարի համար:

Եթե վերոնշյալ դրույթները ընդունելի են Արժույթի միջազգային հիմնադրամի համար, պատիվ ունեմ՝ առաջարկելու, որ սույն նամակը և Ձեր պատասխանն այսուհետ միասին կկազմեն միջազգային համաձայնագիր, որն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Արժույթի միջազգային հիմնադրամը ծանուցում ստանա Հայաստանի Հանրապետության կողմից՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ներքին ընթացակարգերի կատարման մասին:

Ընդունե՛ք, խնդրում եմ, հարգանքներիս խորին հավաստիքը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

01 հունիսի, 2020թ.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
Պարոն Ատոմ Ջանջուղազյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

Ի պատասխան Ձեր՝ 2020 թվականի մայիսի 23-ի նամակին՝ ուրախ եմ տեղեկացնել, որ 2020 թվականի մայիսի 18-ին Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր խորհուրդն ավարտեց Պահուստային ծրագրի աջակցությամբ իրականացվող ծրագրի ներքո Հայաստանի Հանրապետության կատարողականի երկրորդ վերանայումը: Հայաստանի եռամյա Պահուստային ծրագիրը՝ 180 միլիոն ՀՓԻ չափով, համարժեք ԱՄՀ-ում Հայաստանի քվոտայի 139.75 տոկոսին, հաստատվել էր ԱՄՀ խորհրդի կողմից 2019 թվականի մայիսի 17-ին:

2020 թվականի մայիսի 18-ին Գործադիր խորհուրդը հաստատեց նաև իշխանությունների հայտը՝ ավելացնելու Պահուստային ծրագրի ներքո Հայաստանի հասանելիությունը քվոտայի 100 տոկոսի չափով (128.80 միլիոն ՀՓԻ)՝ Պահուստային ծրագրի ներքո ընդհանուր հասանելիությունը հասցնելով մինչև 308.8 միլիոն ՀՓԻ (Հայաստանի քվոտայի շուրջ 240 տոկոսը): Ավելացումը և վերանայման ավարտումը անմիջապես հասանելի դարձրին 205.94 միլիոն ՀՓԻ-ին համարժեք գումար:

Իշխանություններն իրենց մտադրությունն են հայտնել, որ 2020 թվականի ընթացքում Պահուստային ծրագրի ներքո գնումներն օգտագործվելու են որպես ուղղակի բյուջետային աջակցություն՝ ֆինանսավորելու կառավարության բյուջեի դեֆիցիտը: Այս գնումները ներառելու են (1) վերը նշված արդեն հասանելի 205.94 միլիոն ՀՓԻ գումարը, (2) 25.714 միլիոն ՀՓԻ-ն, որը հասանելի կլինի Պահուստային ծրագրի ներքո Հայաստանի Հանրապետության կատարողականի երրորդ վերանայման ավարտին:

Պահուստային ծրագրի ներքո գնումները ենթակա են հետևյալ պայմաններին.

- *մարում.* Պահուստային ծրագրի ներքո ստացված միջոցների հետգնումները ենթակա են յուրաքանչյուր գնմանը հաջորդող 3¼-5 տարվա ընթացքում, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր գնում հետգնվելու է 8 հավասար եռամսյակային մարումներով՝ սկսած յուրաքանչյուր գնումից հետո 3¼տարուց:
- *վարկավորման տոկոսադրույք.* ֆինանսավորման վճարները բաղկացած են՝ (1) շուկայական Հատուկ փոխառելիության իրավունքի (ՀՓԻ) տոկոսադրույքից, որն ունի նվազագույն 0.05% շեմ, և մարժայից (ներկայում 1%), միասին հայտնի որպես բազիսային տոկոսադրույք, և (2) հավելավճարներից, որոնք կախված են վարկի մնացորդի գումարից և ժամանակից: 2% հավելավճար է վճարվում վարկի մնացորդի՝ քվոտայի 187.5%-ը գերազանցող գումարի համար: Եթե վարկը մնում է քվոտայի 187.5%-ից բարձր երեք տարի անց, հավելավճարը բարձրանում է մինչև 3%:

- *պարտավորության վճար.* Պահուստային բոլոր ծրագրերի ներքո ստանձնած միջոցները ենթակա են պարտավորության վճարի, որը գանձվում է յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում՝ տրամադրվելիք մասհանումների նկատմամբ (0.15%՝ մինչև քվոտայի 115%-ը ստանձնած միջոցների համար, 0.3%՝ քվոտայի 115%-ից բարձր և մինչև 575%-ը ստանձնած միջոցների համար և 0.6%՝ քվոտայի 575%-ը գերազանցող գումարների համար): Այս վճարները համամասնորեն վերադարձվում են, եթե գումարները մասհանվում են համապատասխան ժամանակահատվածի ընթացքում: Արդյունքում, եթե երկիրը մասհանում է Պահուստային ծրագրի ներքո ստանձնած ամբողջ միջոցները, պարտավորության վճարն ամբողջությամբ վերադարձվում է: Այնուամենայնիվ, վերադարձ չի իրականացվում կանխարգելիչ Պահուստային ծրագրերի համար, որոնց ներքո երկրները մասհանում չեն իրականացրել:
- *ծառայության վճար.* 0.5% ծառայության վճար կիրառվում է մասհանված յուրաքանչյուր գումարի համար:

Վերջապես, թու՛յլ տվեք պարզաբանել, որ ԱՄՀ պայմանականության ուղեցույցի 9-րդ պարբերության համաձայն՝ ԱՄՀ կարգավորումները չեն համարվում միջազգային համաձայնագրեր:

Ընդունե՛ք, խնդրում եմ, պարո՛ն նախարար, հարգանքներիս խորին հավաստիքը:

Հարգանքով՝

Յուլիա Ուստյուգովա

Հայաստանում ԱՄՀ մշտական ներկայացուցիչ